104. Այսպէս ուրեմն 1863 թ. սկզբից Շամախու թեմական առաջնորդն էր Շահնազարեանց, որ համեմատաբար աւելի մեծ յաջողութեամբ էր գործում յօգուտ եկեղեցւոյ և որ կարողացաւ բողոքականութեան հոսանքի առաջն առնել։

ՄԱՏԹԷՈՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՆԵՐՈՂՈՒԹԵԱՆ ԿՈՆԴԱԿԸ

ԳԼՈՒԽ ԺԶ. *Երես* 111 և 112։ Ընտրուած պատգամաւորներն և առաջնորդը վերոյիշեալ նպատակով գնացին Էջմիածին և տեսակցեցան Վեհափառ Կաթուղիկոսի հետ։

Այս տեղ Դանիէլ եպիսկոպոսը կարողացաւ համոզել կաթուղիկոսին, որ տայ այն ներողութեան կոնդակն, որի մասին ինքն առաջուց մի քանի անգամ խնդրել էր։ Այս կոնդակի մէջ, արձակած 1865 թ. ապրիլի 21ից, Վեհափառը շամախեցի բողոքական հայոց խնդրի հանգամանքները համառօտակի պատմելուց յետոյ՝ յաւելում է. «Սոիպեալ գտաւ տէրութիւնն, որպէս տեղեկացաք յառաջարկութեանց Ձերոց, հաճիլ ընդ խնդիրս նոցա, մինչ մեք յայլ համոզողական հնարս մտաբերէաք լինիլ ձեռներէց և յայտնել տէրութեանն զմերս վերջին կամս՝ ըստ ակնարկութեանց Մեծի Իշխանի Փոխարքային Կովկասեան սահմանաց։ Այս անակնկալ տնօրէնութիւն վշտացոյց զմեզ կարի յոյժ, սակայն հետեւելով բանից սրբազան առաքելոյն թէ՝ «Սաստեա՛, յանդիմանեա՛ և դարձեալ մխիթարեա՛» ընդ նմին և պատուելով զկամս տէրութեանն և զառաջարկութիւնս Ձեր և թախանձագին խնդիր ողջամիտ Հայազգեաց քաղաքիդ՝ բառնամք ահա զպատճառն խտրութեան, զոր դնեն նոքա, և տամ Ձերում սրբազնութեան իրաւունս մխիթարել զնոսա դարձեալ պատշաճաւոր քարոզութեամբ և ի յուշ ածելով նոցա զքաջագով զպանծալի անուն ազգութեան, զարիական գործս մերոց նախահարցն արեամբ չափ պաշտպանելոց զամբողջութիւն ազգի և եկեղեցւոյ, յորում ծնեալ և սնեալ են նոքա, և յորմէ հեստեալն է ապերախտ մոռացութիւն, աններելին յԱստուծոյ և ի մարդկանէ, և ընդունել ի գայթակղելոցն այնոցունց ի ծոց Հայաստանեայց եկեղեցւոյ զայնոսիկ, որք սրտի մտօք զըղ-